

**Ձեռնարկ ԲԱՆՆԱՍՅԱՆ**

**ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄՐԱԿԱՅՍԱՆ ՉԵՎԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Կան լեզվաբանական միջգիտակարգեր, որոնք զբաղվում են մի կողմից լեզվի, մյուս կողմից՝ հարակից երևույթների առնչակցություններով: Դրանցից են էթնոլեզվաբանությունն ու հոգելեզվաբանությունը: Մեր կարծիքով, ազգամշակութային խնդիրներ քննելիս անհրաժեշտ է աղբյուրագիտական արժեք վերապահել նաև բարբառներին: Ժամանակակից բառերն իրենց խորքում պարունակում են բառագիտական, ծագումնաբանական, իմաստաբանական, հնչյունաբանական տեղեկություններ, որոնցով բարբառագիտական փաստերից կարող են վերաճել ազգագրության, հոգելեզվաբանության, լեզվի պատմության և այլ գիտակարգերի համար էական փաստերի:

Անտեսանելի, անշոշափելի, բայց մեր կամքից անկախ գոյություն ունեցող **ԺԱՄԱՆԱԿԸ** մարդու կողմից ճանաչողության օբյեկտ է դարձել դեռ վաղնջական ժամանակներում: Այն չափերը, միանգամայն գործնական նկատառումներով նրա տարբեր հատվածներին անուններ տալը ճանաչողական հսկայական արժեք է ձեռք բերել և դարձել մեր ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության յուրատեսակ ցուցանիշ:

Բարբառային միավորների գրանցումների ընթացքում կուտակել ենք հարուստ փաստական նյութ, որի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ներկայացնել *ժամանակն* ամրակայելու ձևերն ու միջոցները ժողովրդի լեզվամտածողության մեջ: Առկա նյութի քննության մեջ առանձնացրել ենք հատկապես Կարնո բարբառի տարբեր խոսվածքներում առկա իրողությունները, որոնք և ներկայացնում ենք հետևյալ կարգով.

**1. Ժամանակի ամրակայումը ըստ պատմական դեպքերի ու դեմքերի հիշատակության.** Ժամանակն առավել հաճախ ճանաչելի ու չափելի է դառնում՝ ժողովրդի հիշողության մեջ անջնջելի հետք թողած նշանակալից իրադարձությունների, պատմական դեպքերի հետ կապելով: Հաճախադեպ են պատերազմների, նշանավոր ճակատամարտերի հիշատակությունները: Մեր ժողովրդի պատմական ճակատագրի բերումով ճանաչելի, հասկանալի ժամանակահատված է մատնանշում մեծ աղետների՝ գաղթերի, տեղահանությունների, զանգվածային ջարդերի հիշատակությունը: Այդ ձևով ժամանակակիցի արժեք ձեռք բերեցին տրական հողվածև արտահայտված *կօրորումին*, *փախտփախտին*, *գախտին* ձևերը: Նմանատիպ բազմաթիվ ժամանակակից բառաձևեր ենք գրանցել իրենց պատմական բնօրրանը կորցրած և Շիրակի դաշտի գյուղերում հանգրվանած բարբառախոսների հետ զրուցելիս: Այդ եղանակով ժամանակակից կազմելն օրինաչափ է հայերենի բոլոր բարբառների համար: Հատկանշական է, որ ժամանակի մեջ կողմնորոշվելու նպատակով ոչ միայն տարեց բարբառախոսները, այլև նրանց սերունդներն իբրև սանդղածող էին օգտագործում հատկապես 20-րդ դարասկզբի արյունալի անցքերը, գաղթը, կոտորածը:

Պատմական իրադարձությունների հետ զուգորդվող ժամանակակից ձևերը գործառնել են մարդկանց տարիքը կամ որևէ դեպք կոպիտ մոտավորությամբ նշելու համար: Չնայած 60-ամյա վաղեմությանը՝ մեր ժողովրդի համար դեռ թարմ է Երկրորդ աշխարհամարտի հուշը, որի մասին խոսելիս լրացուցիչ պարզաբանումների կարիք չկա, կարելի է ուղղակի ասել՝ *պատերազմին* (առաջ, հետո)...կամ ուղղակի՝ *կըռվի տարին* և այլն: Այսպես՝ Պատերազմին հերըս դեպօն կաշխատէր, կըռվի չըտարան (Գյումրի):

Այսպիսի բառաձևեր կիրառելիս խոսվածքը կրողները նախապես համոզված են, որ իրենց խոսքը բացատրության կարիք չունի և հասկանալի է խոսակիցներին:

Ժողովրդի հիշողության մեջ անջնջելիորեն դրոշմված 1937 թվականը ներկայիս Շիրակի գյուղերի բնակիչների խոսքում հիշատակվում է իբրև *բըռնէրըռնէի տարի*՝ այդ ինքնատիպ բառակապակցությամբ նկարագրական եղանակով բնորոշելով տվյալ ժամանակաշրջանը, նաև ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց դարձնելով այն:

Ժամանակի հոսքի մեջ կողմնորոշվելու նպատակով կիրառվող նկարագրական արժեք ունեցող ժամանակակից բառեր, բառակապակցություններ կան, որոնք առնչ-

վում են ժողովրդի կյանքում իրենց նախադեպը չունեցող իրադարձությունների հետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո ժողովրդի բառապաշար ներխուժած այնպիսի արտահայտություններ, ինչպես «անհատական տնտեսություն», «կոլեկտիվ տնտեսություն», «համատարած կոլեկտիվացում», ծնեցին նաև դրանց իրականացման շրջանը մատնանշող արտահայտություններ, կապակցություններ, որոնք ընկալելի և հասկանալի էին ողջ հանրության համար նաև առանց լրացուցիչ պարզաբանման: Օրինակ՝ Անհաղ ժամանագները ըդուր պարբ ջախճըբան էր:

Համատարածի տարին ...

Ժողովրդի մեջ ժամանականիշի արժեքով հիմա էլ կիրառելի են *Նիզալայի վախտվա, Նիզոլի թըվի* և մմանատիպ բառակապակցություններ, որոնցով արտահայտվում են հարյուրամյա վաղեմություն ունեցող դեպքերի մասին, կամ երբ ուզում են նշել որևէ բանի հին, հնաոճ լինելը.

Էդ Նիզալայի (վախտվա) շըլապկե՞ն հո՞ւրդի՞ծ էս ճարե (Շիրակի Ագատան գ.):

Բնականաբար, խոսքի նյութը կապվում է ռուսական վերջին կայսր Նիկոլայ II-ի անվան և ապրած ժամանակի հետ:

Կիրառելի են նաև նկարագրական ձևեր, որոնք կապվում են Ադամ նախահոր հետ՝ անհիշելի ժամանակները նկատի ունենալով: Այսպես՝ Ատամի վախտըվա խօսել է, օր կրտն... (Մարմաշեն գ): Ատամա էշ կըլըմանի (Բասենի Արմուտու գ):

Առավել ընդունված է *Նոյ նահապետի* անունը հիշատակելու միջոցով որևէ երեվույթի կատարման ժամանակը հին, անցած-զնացած ժամանակների հետ զուգորդելը: Կարևոր բարբառի տարբեր խոսվածքներում *Նոյ* անունն ստացել է բարբառին առավել հարազատ Նրիս արտասանությունը՝ *Նրիսի տարի*: Մա հավանաբար *Նոյ* և *նահապետ* ձևերի բաղադրության՝ կոնտամինացիայի արդյունք է:

Պառվըները դավի օր կենեն, Նրիսի վախտըվա խօրատեքը մըտկները գուկա:

Վերջին տասնամյակում ժողովրդի խոսքում, հատկապես Արարատյան բարբառի խոսվածքներում տեղ գտած *Շարժումից առաջ, Շարժումից հետո* արտահայտությունները, որ կապվում են Արցախյան շարժման հետ, իսկական ժամանականիշ բառակապակցության արժեք են ստացել և օգնում են կողմնորոշվելու մոտ 10-15 տարվա վաղեմություն ունեցող դեպքերի, իրադարձությունների կատարման ժամանակը պարզաբանելու: Դրանք գործածական են նաև գյումրեցիների խոսքում: Հատկանշական է, որ բացառական հոլովի համար բարբառին հատուկ - *էն* վերջավորությունը տվյալ արտահայտության մեջ բարբառների արևելյան խմբակցությանը հատուկ - *ից* ձևով է կազմվում, իսկ բառակապակցության երկրորդ բաղադրիչն արդեն Կարևոր բարբառի հնչյունական օրինաչափություններին է ենթակա՝ *Շարժումից հառաճ, Շարժումից հեղեվ...*

2. *Ժամանակի ամրակայումը՝ ըստ բնական աղետների հիշատակության*. Բազմաթիվ տարերային աղետներ տեսած հայ ժողովրդի այս կամ այն հատվածի համար բավական երկար ժամանակ կարող է ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց ծառայել մեծ ավերածությունների պատճառ դարձած և մարդկային մի քանի սերնդի հիշողության մեջ անջնջելի հետք թողած ավերիչ երկրաշարժերի հիշատակությունը: Շիրակի գոտու բնակիչների խոսքում հատկապես զգալի է 1988 թ. երկրաշարժի հետ ամեն երևույթ զուգորդելը՝ *ժաշկին, ժաշկից հառաճ, ժաշկեն հեղեվ*: Հետաքրքիր է, որ մինչ այդ ավերիչ երկրաշարժը հիշյալ տարածքում համանման արտահայտությամբ միանգամայն այլ ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի սկզբի հետ էր կապվում խոսքը: Անցյալ դարի կեսերին գրառված բանահյուսության մեջ հաճախ է հանդիպում տվյալ տարածքում տեղի ունեցած երկրաշարժի տարին, ժամանակը հիշատակելու միջոցով մի այլ իրադարձության ժամանակը ճշտելու սովորությունը այդ տարածքի մարդկանց խոսքում:

Բացի երկրաշարժերից, մարդկանց հիշողության մեջ կարող են ամրակայվել մահաբեր այլ աղետներ, որոնց հիշատակությունը կարող է կոնկրետ թվական չհիշեցնել, այլ միայն՝ մոտավոր ճշտությամբ ժամանակահատված, ինչպես, ասենք, *կարգրտի տարին, սելաֆի տարին*: Դրանք ժամանակային որոշակիություն ունեն սահմանափակ տարածքի մարդկանց հաղորդակցության ընթացքում և հիշատակվել են մեկ-երկու սերնդի կողմից: Բերենք մեկ օրինակ Գյումրիում գրառված խաղիկներից.

Էռնակ էն տարի՝ *կարգրտի տարի*.

Էշը ծախեծինք, Նադային կարկինք:

Ժողովրդի հիշողության մեջ տասնամյակներ շարունակ կարող է պահպանվել նաև ժանտախտի համաճարակը և դրա հետ զուգորդման ճանապարհով հիշվել որևէ այլ իրադարձություն: Մահաբեր համաճարակների հիշատակությունն առանց տարբերակի նշելու էլ ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց կարող է դառնալ տասնամյակներ շարունակ, ինչպես՝ *Խօլերի տարին* ասլոթաթ գրնացի,

Ջուխտագ ձակերքս անհեր մընացին:

Նկարագրական եղանակով ժամանակը ճշտելուն կարող են նպաստել հիշողության մեջ անջնջելի հետք թողած համընդհանուր նեղություններն ու դժվարությունները, որոնք ամրակայվում են այսպիսի կայուն բառակապակցություններով՝ *սկլուսուքի տարի, սովի տարի, հածի նեղ տարի...*: Այդպիսիք շատ կան ժողովրդական ասացվածքներում: Ասենք՝ Սովի տարին մերը մանուզն ուրածել է:

Նկարագրական եղանակով ժամանակ արտահայտող բառերն ու բառակապակցությունները թեև աստիճանաբար կարող են մոռացվել, սակայն մնում են լեզվում դարձվածքների ձևով՝ ահի տարի, մահի տարի և այլն: Այսպես՝

Այի տարին ինձ է՞ր, որ մայի տարին ինձ էղներ:

Տարերային աղետներից, անակնկալ վնասաբեր երևույթներից գերծ մնալու համար հայ գյուղացին բացի պարտադիր պատերից պահում էր նաև կամավոր, հնարովի պատեր, կատարում պարականոն ծեսեր: Ներքին Բասենում դրանք կոչում էին «ժարամ կիրակիներ»: Այդպիսիք էին *կարկըտի կիրակին, օձի կիրակին, մորեխի կիրակին*, որոնց նպատակը այդ չարիքներից մարդկանց գերծ պահելն էր: Տարբեր տարածքներում Մեծ պատի առաջին շաբաթ օրը պարտադիր մի ծես էր կատարվում՝ մարդկանց աղետալի մի հիվանդությունից՝ ընկնափորությունից հեռու պահելու նպատակով և հիշվում է *թալալօցի կիրակի* անունով:<sup>1</sup> Այդ օրերին զբաղվում էին միայն առունին գործերով: Դրսի գործերը դադարեցվում էին:

Բնական, տարերային աղետների, համաճարակների ու նեղությունների ժամանակը հիշողության մեջ ամրակայելու և դրանց հիշատակությամբ այլ իրադարձությունների ու գործընթացների ժամանակը ճշգրտելու նպատակով կիրառվող ժամանականիշ բառերն ու բառակապակցությունները տվյալ տարածքի մարդկանց լեզվում կարող են գործառել մի քանի տասնամյակ, քանի դեռ կան ականատեսները: Հետագայում դրանք կարող են մոռացվել և զրկվել գործառույթից:

3. *Ժամանակի ամրակայմանը՝ ըստ երկրագործական աշխատանքների*: Ժամանակի ընթացքայնության մեջ որոշակիություն մտցնելիս ժողովրդի լեզվամտածողության մեջ առանցքային հենակետերի դեր է կատարում դաշտավարական, գյուղատնտեսական աշխատանքների պարբերականությունը:

Վաղ մանկական հասակից մասնակից լինելով դաշտավարական աշխատանքներին՝ գյուղացին գիտե, թե տարվա ո՞ր ժամանակահատվածը ո՞ր աշխատանքի հետ է առնչվում: Այս իմաստով էլ, բոլորին հասկանալի ժամանակ են մատնանշում «վարուցանքին», «խոտհրնձին», «կալի վախտը» և մնացորդակ ձևերը: Եվ դրանց հետ կապելով էլ ճշտել ու որոշել են այլ իրադարձությունների կատարման ժամանակը: Մարդկանց ծնունդը, մեկնելու ժամանակը, մահը և մնան այլ իրադարձությունների ժամանակը հիշվում է գյուղական աշխատանքների իրականացման ժամանակաշրջանի հետ զուգորդելով: Բերենք օրինակներ՝ Հճուրնեգրս *կալի վախտը* է ծընվել, մեզելը՝ *խօղհրնձին*: *Կալի գործերի թե՛ վախտը* հիվանդա, գողինք հընգա: *Կալօցին* հավարն հընգավ, թե քըտերը տերդերին սըբանել էն: Ներքին Բասենի բանահյուսության մեջ գտել ենք դաշտավարական աշխատանքների հետ առնչվող բազմաթիվ նկարագրական ժամանականիշներ. *Հացքաղին* խօսկ եմ առել՝ կալը պըրծնինք, նըշանվինք:<sup>2</sup>

Հնարավոր է, որ դաշտավարական ու անասնապահական գոտու բնակիչներին անհայտ լինեն այգեգործական գոտու բնակիչների լեզվին հատուկ, տերմինային արժեք ունեցող մի շարք բառեր, ինչպես նաև հակառակը, այգեգործականին էլ անծանոթ լինեն դաշտավարական ու անասնապահական գոտու որոշ բառեր: Սակայն բնակիչ-

<sup>1</sup> Գ. Հ ա կ ո թ յ ա ն, *Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը*, Եր., 1974, էջ 246:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 46:

մայական միջավայրով պայմանավորված տարբերությունները լայն տարածական ընդգրկում չունեն: Հայերենի բոլոր բարբառներում էլ կիրառելի ու ընկալելի են վարուցանքին, հացքաղին, կալօցին և նման ձևերը:

4) Ժամանակի ամրակայումն ըստ առօրյա կենցաղակարգի: Ամենօրյա առտընին գործերը գրեթե միշտ նույն ժամին կատարելով՝ մարդիկ դրանց միջոցով կուպիտ մոտավորությամբ կարողացել են ժամանակի մեջ կողմնորոշվել: Ժամանակի հետ ոչ մի կապ չունեցող բառերն անգամ տրական հոլովածևով ժամանակի պարագա են ձևավորում խոսքում: Այդ եղանակով ժամանականիշ մակբայի արժեք են ձեռք բերել ընտանեկան իրադարձությունների հետ կապվող *հարսանիքին, հարսընտեսին, նըշանդրեքին, փեսաթրրաշին, գրուխլըվային* և նման ձևերը: Ամեն առավոտ թոնիրը նույն ժամին վառելը (Բասենի խոսվածքով՝ *թընդիրը բոցելը*) նկարագրական եղանակով ժամանականիշ մի մակբայով է արտահայտվել՝ *թընդրաբոցին*, որ գտել ենք Ներքին Բասենի ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված գրքում.

Սաբախտըվա *թընդրաբոցին*

Լուս էրէխէքրս օրօրօցին,

Սրբունիս ձեռը մնաց ծօցին...<sup>3</sup>

Տվյալ դեպքում՝ *թընդրաբոցին* = վաղ առավոտյան՝ *թոնիրը բոցելու* ժամին:

Վաղմջական ժամանակներում մարդիկ օրվա ժամերը կուպիտ մոտավորությամբ որոշում էին նաև կենդանիների վարքի, բույսերի առանձնահատկությունների վրա հենվելով: Հնուց ի վեր արագադալի առաջին և երկրորդ կանչերը օրվա սկիզբն ազդարարող և կենցաղային, առտնին աշխատանքները կարգավորող ժամանակաչափի դեր են ունեցել՝ խորհրդանշելով գիշերավարտն ու լուսաբացը: Հայերենի շատ բարբառներում արագադալի առաջին կանչի պահը բառայնորեն դրսևորվել է հետաքրքիր ձևերով՝ *աքլօրականչին* (Արարատյան խոսվածքներ), *վրըքըկկանչին* (Դարբաս), *խավխօտումին* (Վան, Շատախ) *խօրօգխօտումին* (Մալաթիա), *խօրօգկանչին* (Կարնո խոսվածքներ):

*Այսպիսով* առանձին վիճակների կրկնությամբ պայմանավորված՝ ժողովրդի լեզվամտածողության մեջ առանցքային հենակետերի դեր են կատարում դաշտավարական, գյուղատնտեսական աշխատանքների պարբերականությունը, առտնին կենցաղակարգը, որոնք կարող են ուղենիշի դեր կատարել այլ երևույթներ ու գործընթացներ դրանց հետ զուգորդելով: Այդ ճանապարհով լայն գործառույթ ստացած բառաձևերի, բառակապակցությունների հիմնական մասը հասկանալի է ողջ հանրությանը, երբեմն էլ դրանք կարող են գործառել սահմանափակ տարածքում միայն:

Ժամանակը հաշվելի ու ճանաչելի է դառնում հասարակական-քաղաքական նշանավոր իրադարձությունների, տարերային աղետների, պատերազմների ու տեղահանությունների՝ ժողովրդի հավաքական հիշողության մեջ անցնելիորեն ամրակայվելու հետևանքով: Ժամանակային կոնկրետության հասնելու նպատակով բարբառներում լայնորեն գործառում են նկարագրական արժեք ունեցող բառեր, բառակապակցություններ, քանզի անորոշությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությանը:

## ФОРМЫ ФИКСАЦИИ ВРЕМЕНИ В НАРОДНОМ ЯЗЫКОВОМ МЫШЛЕНИИ

\_\_\_ *Резюме* \_\_\_

\_\_\_ *Дж. Барнасян* \_\_\_

Абстрактность чужда народному языковому мышлению. Существуют диалектные слова и словосочетания, выражающие время описательным способом. Время становится рассчитываемым, узнаваемым и посредством закрепления в памяти и сопоставления с другими процессами знаменательных общественно-политических событий, стихийных бедствий, войн и исходов. Вследствие повторения отдельных ситуаций в народном языковом мышлении роль стержневых опор выполняет периодичность полевых работ, домашний быт.

<sup>3</sup> Գ. Հ ա կ ո բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 343: